Դ. ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ

# ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ՝ ՆՈՐ ԿՅԱՆՔ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի շինարարական գործունեության շառավիղն ընդգրկում է երեք ուղղություն: Առաջին ուղղության առանցքն է կազմում Մայր Աթոռի տարածքի բարեկարգումն ու կառուցապատումը, երկրորդը՝ հայաստանյան թեմերում և երրորդը՝ սփյուռքի թեմերում իրականացված համանման աշխատանքները: Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հզորագույն ճարտարապետաշինարարական մտահղացումը եղավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարածքի և համալիրի ռեգեներացիան ու հարմարեցումը արդի պահանջներին, որոնց գաղափարական հենքն այն է, որ անկախություն նվաճած հայրենիքի վերասկզբնավորումը պահանջում է նաև համապատասխան հզոր կրոնական կենտրոն: Հայ ժողովրդի հոգևոր մայրաքաղաքն օրըստօրե դառնում է կրոնական համաշխարհային կարևորագույն ուղղափառ կենտրոններից մեկը: Այստեղ կատարված շինարարական աշխատանքներն ընթանում են նորակառույց շենքերի հավելմամբ և հների օպտիմացմամբ:

Մայր Աթոռի տարածքում եղած բոլոր կառույցները հուշարձանի կարգավիճակ ունեն և նրանց վերանորոգումները հուշարձանապահպանության բնույթ են կրում: Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալության տարիներին Մայր Աթոռի տարածքում եղած կառույցները բազմիցս վերանորոգությունների են ենթարկվել: Եթե Մայր Աթոռի տարածքի զարգացման հիմքում ընկած էր ռեվիտալիզացիայի (միջավայրի մթնոլորտային վերակենդանացման) գաղափարը, ապա գոյություն ունեցող ներքոհիշյալ շենքերի վերանորոգությունն առաջնորդվեց վերականգնման և վերակառուցման սկզբունքներով:

## Աշխատանքներ Մայր Տաճարի վրա

Մայր Տաճարը համաշխարհային միջնադարի ճանաչողական նշանակության կառույցներից է: Նրա վերանորոգությունների պարեգրությանը անդրադարձ կատարվեց վերևում ներկայացված Մայրավանքի զարգացման պատմության մեջ: Վերջին վերանորոգությունների ընթացքում (1955 թ.) եկեղեցու կրող կոնստրուկցիաների, այսինքն, գմբեթը կրող չորս սյուների ամրացումը կատարվել էր ամրանավորման միջոցով, իրականացվել էին կտուրի խոնավությունը վերացնելուն միտված վերանորոգություններ, ինչպես նաև որմնանկարների մաքրման, ամրացման և լրացման աշխատանքներ[1]: Այս առումով առանձնապես կարևորվում են 1956 թ. և ավելի ուշ Մայր Տաճարի տարածքում կազմակերպված պեղումներն ու հնագիտական հետազոտությունները: Դրանց արդյունքում ի հայտ եկած ժամանակագրական շերտերը կոնսերվացվեցին և պահպանվեցին: Խոսքը վերաբերում է Մայր Տաճարի հիմքում եղած ուրարտական ու անտիկ ժամանակաշրջանների գտածոներին և հատկապես հեթանոսական վաղ քրիստոնեական բազիլիկ կառույցի, որը Վահան Մամի-

---

1 Տե՛ս **Վ. Յարությունեան**, Եկայր շինեցուր, Երևան, 1989, էջ 18-23:

կոնյանի շինարարական գործունեությամբ վերափոխվել էր խաչաձև և կենտրոնագմբեթ՝ մինչ օրս պահպանված հորինվածքի[2]: Այս ընթացքում կատարվել են նաև Մայր Տաճարի Ավագ և Իջման սեղանների վերակառուցումները, հարավային զանգակատան վերականգնումը:



Մայր Տաճարի վերանորոգված որմնանկարները

Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալության առաջին տարվանից՝ 2000 թ. ձեռնարկվեցին Մայր Տաճարի ամրացման նոր աշխատանքներ, այդ թվում՝ կտուրի ջրամեկուսացումը, ներքին որմնանկարների մաքրումը: Մայր Տաճարի տանիքը միշտ էլ շենքի խոցելի մասն է եղել և բազմիցս վերանորոգվել է: Վերջին վերանորոգության ընթացքում իրականացված կապարային ծածկույթը, կոնդենսատի (խոնավության առաջացման) պատճառ դառնալով, քայքայել էր հատկապես թանգարանի առաստաղի որմնանկարները: Տանիքի ծածկի

2 Տե՛ս անդ, էջ 24-26:

օդափոխությունը ապահովելու նպատակով կապարային ծածկույթը փոխարինվեց պղնձյա ծածկույթով: Տաճարի որմնանկարների մակերեւույթի յուղոպվածությունը վերացնելու համար օգտագործվեցին զանազան մաքրող ու պահպանիչ լուծույթներ: 2008թ. իրականացվեց նաեւ եկեղեցու թանգարանային մասի որմնանկարների վերականգնումը: Նկարների որոշ մասեր քայքայվել էին, դրանք լաբորատոր հետազոտությունների միջոցով ուսումնասիրվելով՝ վերականգնեց Մայր Աթոռի նկարիչ Անդրանիկ Անտոնյանը:



Մայր Տաճարի թանգարանի վերանորոգված որմնանկարները

**Մայրավանքի նոր դարպասների կառուցումը**

Պարիսպների վերակառուցման կապակցությամբ, ի հավելումն 1954 թ. իրականացված Արեւելյան, Հյուսիսային դարպասներին եւ ժամացույցի աշտարակին (ճարտ.՝ Ա. Գալիկյան, 1959 թ.), Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալության տարիներին կառուցվեցին եւս երկու դարպասներ Արարատյան փողոցի կողմում՝ Ս. Գրիգոր Լուսավորչի եւ Վեհարանի բակի հարավային կողմում՝ պաշտոնական այցելությունների:

Վազգենյան դարպասը, որ կառուցվել էր 1962 թ. Վազգեն Ա Կաթողիկոսի նախաձեռնությամբ և ճարտարապետ Ա. Գալիկյանի նախագծով, Գարեգին Բ Կաթողիկոսի օրոք կատարված ընդարձակումների արդյունքում, 2002 թ. տեղափոխվեց դեպի քաղաքային՝ Կոմիտասի հրապարակ: Այն փոփոխությունների չենթարկվեց, մնաց Հոռոմոսի վանքի հաղթակամարի՝ «Ղոշերի» բնագրային ձևերով[3]. ինչը ամրագրված է վիմական արձանագրությամբ:



Տեսարան Մայր Աթոռի նորակառույց դարպասներից՝ Պաշտոնական մուտքը

Ս. Գրիգոր Լուսավորչի դարպասը հորինվածքային միասնության մեջ է Բաց խորան եկեղեցու հետ: Այն ճարտարապետությամբ միանգամայն տարբեր է մյուս երկու դարպասներից և նվիրված է Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակին: Կոթողի և հարակից Խորանի ճարտարապետներն են Ջիմ Թորոսյանը և Ռոմեո Ջուլհակյանը: Ս. Գրիգոր Լուսավորչի դարպասը մտահղացված է որպես մոնումենտալ տետրապիլոն, որն աշխարհի կողմերի նկատմամբ տեղադրված հեռանկարային կամարների և վերևից դեպի երկնային լույսը բացվող գմբեթատակ քառակուսու միջոցով սահմանող տարածականություն և լույս ու ստվերային խաղ է ստեղծում: Համակառույցը իրականացվել է կապտավուն բազալտից: Տետրապիլոնի արևելյան ճակատին՝ կամարի մեջտեղում, 3 մ բարձրությամբ քրիստոնեական խաչն է, որի երկու կողմերում Ս. Տրդատ թագավորի ու Ս. Գրիգոր Լուսավորչի հարթաքանդակներն են: Հարթաքանդակային կոմպոզիցիայի ներքևում, ուղղանկյուն պարագծով ճաղապատ մուտքն է, որի թափանցիկ կառուցվածքը

3 Տե՛ս **Վարազդատ Յարութիւնեան**, Եկայր շինեցուք, էջ 34:

թույլ է տալիս հեռվում նկատելի դարձնել եւ ընդհանուր պատկերի մեջ ընդգրկել Մայր Տաճարը: Արեւմտյան ճակատին՝ Լուսավորչի եւ Տրդատ արքայի քանդակների բարձրությամբ, կամարի կողերին ատրիճանավոր պատվանդանի ձեւով զետեղված պարզակների վրա Հայաստանում քրիստոնեությունը տարածող Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների հարթաքանդակներն են: Հարթությունների ծավալատարածական պլաստիկությունը լրացնում են հայատառ վիմական արձանագրությունները, որոնցից ամենաընդարձակը փորագրված է դարպաս-կոթողի հյուսիսային ճակատի արեւելյան թեւի վրա:

2007-2009 թթ. իրականացված Վեհարանի պաշտոնական դարպասի նախագիծը 2006 թ. կազմել է ճարտարապետ Գրիգոր Նալբանդյանը: Դարպասի նշանակությունը դեպի Վեհարան պաշտոնական այցելությունների մուտքը ապահովելն է: Այն կամարային բացվածքի երկու կողմերում պահակային ծառայության համար նախատեսված աշտարակաձեւ ծավալներով եզրափակված ավտոմատ ղեկավարվող ցեղազարդ մետաղական ճաղացանց է, կառուցվածքով երկփեղկ դուռ է: Դարպասի ճարտարապետական հորինվածքի մշակումը եւ շինանյութի ընտրությունը պայմանավորված է ինչպես Վազգենյան դարպասի ճարտարապետությամբ, այնպես էլ հարակից՝ Խրիմյան թանգարանի պատմական կերպարին համահունչ միջավայրի ստեղծմամբ:

**Մայր Աթոռի տպարանի շենքի երկրորդ վերակառուցումը**

Տպարանի շենքը գտնվում է դեպի Մայր Տաճար տանող գլխավոր ճանապարհի ձախ կողմում՝ Երեմյան խցերին առընթեր: Այստեղ տարածական համահնչություն ստեղծելը անհետաձգելի անհրաժեշտություն էր: Տպարանը վերակառուցվել է Վազգեն Ա Վեհափառի օրոք, վերջերս Գարեգին Բ Կաթողիկոսի ձեռնարկած տարածական զարգացման աշխատանքների կապակցությամբ՝ Երեմյան խցերի այգեպատ տարածքի հետ համաչափության ապահովման նպատակով, կատարվեց տպարանի առջեւում գտնվող հողատարածքի ցանկապատում:

Տպարանի շենքը հիմնադրվել է 1889 թ. Մակար Կաթողիկոսի նախաձեռնությամբ: 1901 թ. միահարկ շինությանը կից հարավային կողմից ավելացվել են երկու ընդարձակ կամարակապ սրահներ՝ մասնակի նկուղով: Վ. Հարությունյանն այս առթիվ նշում է՝ «Երկրորդ հարկը կառուցվել էր մեր ժամանակներում եւ օգտագործվում էր որպես հանրակացարան»[4]: Համաձայն ճարտարապետ Ա. Գալիկյանի եւ ինժեներ Ա. Մարինյանի 1959թ. արված տեխնոլոգիական նախագծի՝ երկրորդ հարկը ամբողջապես պիտի քանդվեր եւ վերակառուցվեր առաջին հարկի ճարտարապետական ձեւերով ու նույն գույնի քարով: Ըստ այդմ 1960-1962 թթ. ավելացվել է 4 մ բարձրությամբ երկրորդ հարկը: Որքան էլ շենքի վիճակը գնահատվել է բավարար, 2003 թ. անհրաժեշտություն զգացվեց այնտեղ իրականացնել վերականգնման եւ վերակառուցման մի շարք աշխատանքներ: Շենքի արտաքին պատերի ներքեւի հատվածներում կատարվել է մեկ մետր խորությամբ ջրամեկուսացում: Արեւելյան ճակատի մայթի ասֆալտապատ ծածկույթը փոխարինվել է ասֆալտ-բետոնով, իսկ կորոզիայի ենթարկված արտաքին պատերի երեսաշերտը մաքրվել է ավազաշիթային

4 **Վ. Հարությունյան**, Եկայր շինեցուր, էջ 39:

եղանակով: Նկատի ունենալով, որ պալատի շենքը համարվում է պատմական հուշարձան, վերանորոգման ընթացքում նրա արտաքին ճարտարապետական ձևերը և լուծումները պահպանվել են նույնությամբ և չեն փոխվել: Առաջին հարկի տպագրական և մոմի արտադրամասերը տեղափոխվել են, և դրանց տեղը վերածվել է գրատուն-սրահի, որտեղ այսօր գրքեր և հուշանվերներ են վաճառվում: Սրահի համար որպես մուտք են ծառայում հյուսիսային ճակատի առաջին հարկի մեջտեղի երկու պատուհանները, որոնք փոխարինվել են ճակատի ճարտարապետական ձևերին համահունչ փայտյա ապակեպատ դռներով: Տպագրատան ներքին ձևավորման համար պատերի ներքին մակերեսների սվաղը քանդելով՝ բացվել է քարի անմշակ ֆակտուրան, որ մաքրվելով՝ ինտերիերում հետաքրքիր տեսք է ստեղծում: Այս ընթացքում հիմնանորոգման են ենթարկվել շենքի օդափոխության, կոյուղու, ջրամատակարարման, ջեռուցման և ջրահեռացման համակարգերը:



Մայր Աթոռի պալատի վերանորոգված շենքը

### Հին Վեհարանի վերակառուցումը

Հին Վեհարանը կառուցվել է 1738-1741 թթ. Ղազար Ջահկեցի Կաթողիկոսի օրոք: Այն երկհարկանի անպաճույճ հում և թրծված աղյուսով իրականացված շենք է, որը դարերի ընթացքում հնացել-մաշվել էր: Այն Ղազարապատի հետ վերջին անգամ վերանորոգվել է 1968 թ. Վազգեն Ա Կաթողիկոսի նախաձեռնությամբ, երբ կաթողիկոսական նստավայրը,

տեղափոխվելով Նոր Վեհարանի շենք, Հին Վեհարանը վերափոխվել էր հայ Կաթողիկոսների թանգարանի (ճարտարապետ՝ Ա. Գալիկյան)[5]: Վերաշինության ընթացքում ամրացվել են շենքի հիմքերը, փակվել են շենքի հյուսիսային կողմի մուտքն ու վերացվել նրա առաջ եղած ասրիճանավանդակը, ինչպես նաև վերակառուցվել են հարավային սանդղքատունը ու նրա արևելյան և արևմտյան կողմերից բացվել են նոր մուտքեր, կատարվել են արտաքին երեսպատման աշխատանքներ, թանգարանացման գործընթացով պայմանավորված՝ հարդարվել են նկուղային և երկրորդ՝ «Ծաղկյա» կոչվող գահադահլիճի հարկերը[6]:

Գարեգին Բ Հայրապետի նախաձեռնած տարածական զարգացման աշխատանքներով պայմանավորված՝ պահանջ առաջացավ կատարելագործելու նաև թանգարանը և նրա հարակից շինությունը: Վերակառուցման ճարտարապետն է Ա. Նազարեթյանը: Այժմ վերակառուցումն ընթացքի մեջ է, քանդվել են Հին Վեհարանի հարավային մասում 1970-ական թվականներին կառուցված կցակառույցի ծածկն ու ասրիճանավանդակը, հանվել են կտուրի ցինկապատ թիթեղն ու փայտե կոնստրուկցիաները: Վերակառուցումից հետո շենքը կծառայի որպես միաբանական թանգարան-հյուրատուն: Գետնի սալահատակի փոխարեն շենքն ունենալու է օդափոխվող հատակ, որը կապահովի հիմքերի ներքին մակերեսների օդափոխությունը և կազատի հատակը շարունակ կուտակվող խոնավությունից: Հենց այս նպատակով կառույցն ամբողջությամբ բարձրացվել է 55 սմ-ով: Այս միջոցառումների իրականացումը միտված է նրան, որ հետագայում, ինչպես Հին Վեհարանի հարավային հատվածի վերին հարկի, այնպես էլ Ղազարապատի առաստաղները բարձրացնելով հասցվեն 7.680 մ նիշին և հավասարեցվեն վանատան տանիքի քիվին ու ստեղծեն միասնական բարձրությամբ ուրվագիծ: Վերակառուցված համալիրը ձևավորված է ճանաչողական գունային կողավորմամբ: Ընդհանուր կառույցը իրականացվել է դարչնագույն քարից, սակայն հայոց Վեհափառների թանգարանային ու հյուրանոցային հարկերը ընդգծվել են իրենց բաց երանգով: Համակառույցի մուտքերը առանձնացվել են, ընդ որում, թանգարանային մասը լուծված է որպես 6 հաջորդական բացվածքներով կամարակապ, իսկ հյուրատան հատվածը՝ վերևից քեռշկային եյուստով շքամուտքի ձևով: Երկու շենքերի ճակատները իրար հետ համադրվել են միատճ լուսամուտներով: Դրանց միջև համահնչություն ստեղծելու համար կարևորություն է տրվել բացվածքների միասնականությանը և հարկերի վերևով անցնող քիվերի նույնական լուծումներին: Դեֆեկտային ակտերի հիման վրա վերափոխվել են արտաքին պատերի վնասված քարերը, ցեմենտ-ավազային շաղախով վերասվաղվել են բաց երանգի ճակատային հատվածները և ներկվել էքստերիերային ներկով, ամրացվել է պատերի միջուկը, նորովի կղմինդրապատումով լուծվել են տանիքի անձրևաջրերի հեռացման խնդիրները և այլն: Ինժեներական կոմունիկացիաները և սարքերը տեղադրվել են տանիքում իրականացված երկաթբետոնե հարթակի վրա:

Հին Վեհարանի շենքի կրող կոնստրուկցիաները անհրաժեշտ հատվածներում վերաամրացվել են երկաթբետոնե շապիկով: Ամրանավորվել են նաև նկուղային հարկի առաստաղը և մուտքերի շրջանակները: Առհասարակ, հին տեսքով ու կերպարով պահպանվել է նկուղային հարկի թաղակապ առաստաղը: Նույն ձևով, շենքի որոշ մասերում

5 Տե՛ս **Վարազդատ Յարութիւնեան**, Եկայք շինեսցուք, էջ 50:

6 Տե՛ս անդ, էջ 51-52:

բնագրային վիճակով պահպանվել է պատերի աղյուսյա շարվածքը: Սա ինտերիերային յուրահատուկ տեսք ու մշակույթ է հաղորդում սենյակների տարածության ներսում:



Հին Վեհարանի վերակառուցումը

Հին Վեհարանի հարավային մասը վերակառուցվել է որպես Վեհափառ Հայրապետի հարկաբաժին: Գոյություն ունեցող պահեստները եւ օժանդակ սենյակները վերահատակագծվել են որպես ցուցասրահներ եւ սպասարկման սենյակներ: Չնայած ցուցասրահների տարբեր նիշերին, շենքի ենթամասերը ապահովված են ներքին տարածքների փոխադարձ կապով ու էվակուացիոն լուծումներով:

Կարեւոր է նշել, որ Հին Վեհարանի քանդման աշխատանքների ընթացքում նկուղային հարկում ի հայտ են եկել աղյուսի արտադրամաս եւ հնոց, որոնք վերակառուցման ընթացքում ամբողջությամբ կոնսերվացվել են ու թանգարանացվել: Շենքի շրջապատը բարեկարգվել է որպես վեհարանային բակի շարունակություն:

### Ալեք եւ Մարի Մանուկյան Գանձատան վերանորոգությունը

1982 թ. հոկտեմբերին կյանք մտած Ալեք եւ Մարի Մանուկյանների անունը կրող Գանձատունը իրադարձություն էր Մայր Աթոռի կյանքում: Ճարտարապետ Բաղդասար Արզումանյանի նախագծով իրականացված կառույցն իր ոճական առանձնահատկությամբ

նոր երանգ ավելացրեց Մայր Աթոռի համալիրին: Կարմրավուն տուֆով երեսպատված 19,35x62,0մ չափերով շենքը անասելի պերճանք ունի, որ ստեղծագործաբար շարունակում է հարակից շենքերի ճարտարապետությունը: Չնայած խնամքին եւ հոգածությանը, այնուամենայնիվ, արտաքին կամարասրահներում արդեն առաջացել էր հատակի վերանորոգման անհրաժեշտություն: Ներքին տարածքները՝ պատերով, առաստաղով եւ հատակով, կարիք ունեին մաքրման ու նորացման: Թանգարանային ֆոնդերի հարստացումը ստիպում էր որոնել նոր տարածություններ, ինչպես նաեւ ջեռուցման եւ օդափոխության սարքերի արդիականացում: Այս նկատառումներով ձեռնարկվեցին շենքի վերանորոգման աշխատանքները: Շենքում տեղադրված ջեռուցման սարքերը ընտրվեցին ուղղահայաց համաչափությամբ եւ սյուների լայնությանը հավասար, այնպես որ դրանք մասշտաբային համահնչություն ստեղծեցին ներսում՝ առանց աղավաղելու գանձատան ցուցադրության միասնականությունը:

## Երեմյան խցերի վերանորոգությունը

Երեմյան խցերի հիմքերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանց որմածքի կրաշաղախը հողմնահարված է: Այս եւ գրունտային ջրերի առկայության պատճառով առաջացած ներքին տարածքների խոնավությունը, կառույցի ստորին մասի կարանների եւ քարերի քայքայվածությունը եւ այլն, շենքի վերակառուցման անհրաժեշտություն առաջացրին, որն իրականացվեց ճարտարապետ Աշոտ Մանասյանի նախագծով: 1892-1893 թթ. կառուցված երկհարկ կացարանը ուներ 9 բաժանմունք: Ընդ որում, ամեն մի բաժանմունքում տեղաբաշխվել են 2-ական բնակարան ամեն մի հարկի վրա: Բնակարանների ընդհանուր թիվը շենքում 18-ն է: Առաջին հարկի կացարանների մուտքերը արեւմտյան կողմից են, իսկ երկրորդ հարկինը՝ արեւելյան: Ամեն մի բաժանմունքի հատակագծային չափերը 6.4x12.5 մ է, իսկ բարձրությունը՝ 4.2 մ: Շենքը նկուղային հարկ չունի:

Շենքի վերակառուցումը կատարվեց երեք հիմնական փուլերով: Սկզբում իրականացվեցին քանդման եւ մաքրման աշխատանքները: Երկրորդ փուլում ստեղծվեց 1.2 մ խորությամբ նկուղային հարկ: Այն փորվեց դռների բացվածքներով՝ առաջին հարկի հատակը հասցնելով 120 սմ մակարդակի: Կրող պատերի հարակցությամբ դեպի տանիք բարձրացվեցին 20 սմ տրամագծով օդափոխության խողովակներ: Առաջին հարկի հատակը նորովի իրականացվեց երկաթբետոնե եւ այլ շերտերով: Այսպիսով, հնարավոր եղավ շենքի գրունտը մեկուսացնել խոնավությունից: Երրորդ փուլում իրականացվեցին հարկերի ներքին տարածքների եւ այլ մասերի վերափոխման ու արտաքին ճակատների ամրացման ու վերականգման աշխատանքները:

Շենքի առաջին հարկի մի կողմի կացարանները վերամշակվեցին որպես գրասենյակներ, իսկ երկրորդ հարկը դարձավ հյուրատուն: Եղած ինը կացարաններից ութը վերածվեցին հյուրատների, դրանցից մեկը հատկացվեց հյուրերի սպասարկման ծառայություններին: Հյուրատան ամեն մի միավոր առաջին հարկում ունի նախամուտք, պահարանախորշ եւ ներքին աստիճանավանդակ, իսկ երկրորդ հարկում՝ նախասրահ, լողասենյակ, զգեստասենյակ, նախասրահ-ընդունարան, ննջասենյակ եւ պատշգամբ:

Վերակառուցման աշխատանքների ընթացքում կատարվեց հիմքերի, պատերի, միջ-

հարկային ծածկերի, փանիքների, բացվածքների առողջացում: Հիմքերի եւ կրող պատերի ուժեղացման հետ, առաջին եւ երկրորդ հարկերի փայտյա փտած ծածկերը փոխարինվեցին երկաթբետոնով՝ ներառյալ աստիճանները: Մետաղական հեծանների օգնությամբ ուժեղացվեցին նաեւ երկրորդ հարկի եւ ձեղնահարկի փայտյա ծածկերը: Հիմնովին վերափոխվեցին ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, էլեկտրաֆիկացման ցանցերը: Շենքի արդիականացումը կատարվեց ժամանակակից շինանյութերի օգտագործմամբ, այնպես որ անփոփոխ մնաց Երեմյան խցերի պատմական տեսքը, իսկ ներսը ամբողջությամբ վերածվեց հարմարավետ ու դիզայնի արդի պահանջներին համապատասխանող տարածքի:



Ալեք և Մարի Մանուկյան Գանձատունը վերանորոգումից հետո

**Նոր Վեհարանի վերանորոգությունը եւ բարեզարդումը**

Նոր Վեհարանի վերանորոգումով ու բարեկարգումով նշանավորվում է Մայր Աթոռի տարածքում նորագույն ճարտարապետական միջոցառումների մուտքը: Ի դեպ, այս շենքի կառուցումը վերջերս բոլորեց իր հարյուրամյակը: Այն կառուցվել էր 1910 թ. Պողոս Զոհրաբյանի նախագծով եւ անվանի բարերար Ալեքսանդր Մանթաշյանի նվիրատվությամբ: Առաջին աշխարհամարտի պատճառով շինարարությունը անավարտ մնաց, եւ շենքը նախ ապաստարան ծառայեց Եղեռնից բռնագաղթածների համար, իսկ խորհրդային կարգերի օրոք օգտագործվեց բանակի կարիքների համար[7]: 1956 թ. կառույցը վերադարձվեց Մայր Աթոռին, ապա Վազգեն Ա Կաթողիկոսի նախաձեռնությամբ եւ ճարտարապետ Ա. Գալիկյանի նախագծով հիմնովին վերակառուցվեց եւ բարեզարդվեց: Այս ընթացքում, հատկա-

7 Տե՛ս **Վարագդատ Յարութիւնեան**, Եկայք շինեսցուք, էջ 43:

պես գեղեցիկ ձևակերպում են ստացել նախասրահն ու գլխավոր սանդուղքները, ժողովների դահլիճը, ճաշասրահը, Վեհափառի ընդունարանը, սեղանատունը և այլն[8]: Շենքի վերակառուցման ավարտից հետո, ճարտարապետ Էդվարդ Ութուջյանի նախագծով 1962 թ. ձեռնարկվել է Վեհարանի բակի բարեկարգումը, ավարտին է հասցվել տարածքի պարսպապատումը և բակի հյուսիս-արևմտյան անկյունում թողնվել է լրացուցիչ մուտք[9]:





Նոր Վեհարանի վերակառուցման նախագծի ինտերիերների պատկերներ

8 Տե՛ս անդ, էջ 44:
9 Տե՛ս անդ, էջ 49:

Վեհափառ Հայրապետ Գարեգին Բ Կաթողիկոսի օրոք, Վեհարանի արեւմտյան կողմում ավելացող նոր հանդիսությունների դահլիճի կապակցությամբ, Նոր Վեհարանի հետնամասում՝ երկրորդ հարկում, կառուցվեցին դեպի հանդիսությունների մասնաշենքը տանող կողային տաք անցումներ: Ձեռնարկվեցին ներքին տարածքների շինարարական բարձրակարգ ձեւավորման աշխատանքներ: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհարանի շենքի վերանորոգման նախագիծը 2005 թ. հանձնարարվեց ճարտարապետ Հրաչյա Պողոսյանին: Մինչ այդ Երեւանի ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարանի գիտահետազոտական լաբորատորիայում պատրաստվեց շենքի տեխնիկական եզրակացությունը: Հետեւությունն այն էր, որ կառույցի ինտերիերի արդիականացման եւ ֆունկցիոնալ փոփոխությունների անհրաժեշտություն կար՝ պայմանավորված Վեհարանի բակում ավելացած նորակառույցներով: Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ կառուցվել է նոր դիվանատունը, հանդիսությունների դահլիճը՝ 750 տեղով, կատարվել է հին դիվանատան ընդարձակումը, նորովի օգտագործմամբ վերանորոգվել է Հին Վեհարանը եւ այլն: Այս ամենի հետ անհետաձգելի անհրաժեշտություն է Վեհարանի գրունտը խոնավությունից զերծ պահելու համար օդափոխության հարկի ստեղծումը:

Նոր Վեհարանի ֆունկցիոնալ փոփոխությունների թվում են սանհանգույցների տեղափոխումը եւ դրանց կազմում հաշմանդամների մասի հավելումը, ինչպես նաեւ գոյություն ունեցող սանհանգույցների տեղում 2 վերելակների տեղադրումը: Երկրորդ հարկի ձախակողմյան թեւում եղած ցուցասրահը տեղափոխվեց առաջին հարկի աջակողմյան թեւ՝ Վեհափառի աշխատանքային սենյակների հարեւանությամբ, այնպես որ այն բոլոր այցելուների համար մատչելի է նաեւ դրսից: Ցուցասրահի տեղում կառուցվեցին պատվավոր հյուրերի համար բնակելի հարմարավետ երեք տարածքներ՝ համապատասխան հյուրասենյակով, ննջարանով եւ լոգարանով: Եղած երկու ընդունարանների թիվն ավելացավ եւս մեկով: Հատակագծային որոշ վերափոխումներ իրականացվեցին նաեւ Նոր Վեհարանի աջ թեւում եղած գրասենյակների կազմում: Դրանց թիվը նվազեցվեց՝ փոխարենը ավելացվեց նոր ժողովասենյակ:

Նոր Վեհարանի աշխատանքային գծագրերը իրականացվել են 2008-2009 թթ: Բացի վերեւում նշված շինարարական վերափոխման աշխատանքներից, գծագրերի փաթեթում ընդգրկված է նաեւ ողջ տարածքի ինժեներական ցանցերի արդիականացումը, այդ թվում՝ օդափոխությունը, օդորակումը, ջեռուցման, ջրամատակարարման ու կոյուղու, էներգասնուցման եւ էլեկտրալուսավորության, հակահրդեհային ազդանշանային ցանցերն ու համակարգերը, հեռախոսի, հեռուստացույցի եւ ինտերնետային համացանցով կապի ապահովումը: Այս ամենն իրականացնելու համար անհրաժեշտություն առաջացավ իջեցնել Վեհարանի նկուղային հարկի կենտրոնական մասի մակարդակը:

Վերակառուցման նման լայնամասշտաբ գործում մեծ կարեւորություն է տրվում շենքի բաղկացուցիչ սենյակների ներքին հարդարմանը: Այս նկատառումներով քանդվում եւ վերակառուցվում են կենտրոնական մուտքն ու նախասրահը, թեւերի նախասրահները, Կաթողիկոսի աշխատասենյակները, պաշտոնական ճաշասրահը, խոհանոցը եւ Վեհափառի բնակարանը, գահասրահի նախասրահը, ընդունարաններն ու դրանց նախասրահները: Վերջիններում նախատեսվում են բուխարիներ, պատերը 1 մ բարձրությամբ ծածկվում են

փայտյա ձեւավոր պանելներով, փոխվում է հատակը, առաստաղների եւ քիվերի ձեւավորումը, բոլոր դռներն ու լուսամուտները: Փոխվում եւ նորացվում է գահասրահի սալահատակը, պատերը երեսպատվում են նոր նյութերով, իսկ առաստաղը հարդարվում է փայտյա եւ գիպսե դետալներով:

Ներկայացված աշխատանքների համալիրում մեծ կարեւորություն ունի նաեւ Վեհարանի շենքի արտաքին նորացումը: Այդ կապակցությամբ բարձր ճնշման տակ մղվող ջրով լվացվում են բոլոր ճակատները, նորացվում են պատշգամբները, փոխվում է տանիքի ծածկույթը եւ այլն:

2011 թ. դրությամբ Նոր Վեհարանի շինարարական աշխատանքները դեռեւս ընթացքի մեջ են:

## Մայր Աթոռի հին դիվանատան ընդարձակումը

2011 թ. որոշում ընդունվեց Վեհարանի բակի հյուսիս-արեւմտյան կողմում գտնվող վարչատնտեսական շենքը վերափոխել եւ հատկացնել Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնին: Այդ նկատառումով գոյություն ունեցող շենքը 19 մ չափով ընդարձակվեց դեպի հյուսիս եւ համալրվեց նախորդ մասի շարունակությունը կազմող միջանցքի երկու կողմերում տեղաբաշխված 8 գրասենյակներով (նախագծի հեղինակ՝ Արամ Սահակյան): Նոր կառույցը հատկացնելով «Կյոր սեղանին»՝ դրա հարավային սկզբնամասում բացվեց նոր մուտք, որն ունի իր նախասրահը եւ սանհանգույցը: Շենքի բարձրությունն ու միաոճությունը նույնակերպ պահպանվեցին: Քանի որ կառույցը Վեհարանի բակի կողմից մուտք չուներ, ավելացած մասի հյուսիսային կողմում ստեղծվեց դարպաս, որը բացվում է անմիջապես գրասենյակային շենքի առաջ:

## Ֆրանսիական ատամնաբուժարանի շենքը

Գտնվում է Արարատյան փողոցի արեւելյան կողմում, Մայր Աթոռի պարիսպներից դուրս՝ երաժշտական դպրոցի հարավում: Շենքը տեղում եղած առողջապահական կառույցի վերակառուցումն է՝ որպես մանկական ատամնաբուժարան: Ճարտարապետն է Լեոն Վարդանյանը, կառուցվել է 2004 թ. ֆրանսիական «Բարձունք 5165» մարդասիրական կազմակերպության մեկենասությամբ : Տեղում գոյություն ունեցող շենքը մինչեւ տանիքը 7 մ բարձրությամբ՝պատային համակարգով միահարկ կառույց է: Այն 13x32 մ ընդհանուր չափերով, երեք բլոկներից կազմված ուղղանկյուն հատակագիծ ունի: Հյուսիսային եւ հարավային 9x13 մ չափերով բլոկներից յուրաքանչյուրը կրող պատերով բաժանվել է երեք սենյակների: Կենտրոնական բլոկը 13 մ կողմով քառակուսի է, որի արեւելյան եւ արեւմտյան կողային տարածքները 3 մ չափով կրող պատերից դուրս են: Փաստորեն, ստացվում է, որ կենտրոնական սրահը 13x7 մ չափերով դահլիճ է: Վերակառուցման միջոցով կենտրոնական բլոկի արեւելյան եւ արեւմտյան կողային հատվածները 3 մ չափով դեպի դուրս երկարելով՝ վերածվել են 6x13 մ չափերով տարածքների: Շենքի մնացյալ բոլոր մասերը թողնվել են նույնությամբ եւ երեսպատվել գորշ գույնի տուֆով: Ճակատները բերվել են միաշնչության,

այսինքն նորակառույց մասերը իրենց բացվածքներով կրկնում են նախկինում գոյություն ունեցող ճարտարապետական մանրամասները: Շենքի վերափոխումը չափազանց դիպուկ է, այն իր խաչաձև հատակագծային լուծմամբ բնագրային դասական կառուցվածքի տպավորություն է թողնում: Տանիքը խաչաձև քառալանջ լուծում ունի, որ ամբողջությամբ վերածածկվել է, ինչպես նաև կրող կանգնակներով ու ծպեղնային կոնստրուկցիաներով վերափոխվել: Ամբողջապես երկաթ-բետոնով նորովի վերաշինվել է ողջ ծածկը: Շենքի գլխավոր առանցքը հյուսիս-հարավ ուղղությունն է, հորինվածքի կենտրոնը 78 քմ մակերեսով ընդարձակ սպասասրահն է: Գլխավոր մուտքը հյուսիսային կողմից է: Նախասրահի երկու կողմերում երեխաների և գրանցումային սենյակներն են: Սպասասրահի երկու կողմերում վարչական և վիրաբուժական 4-ական սենյակներն են: Վերջինների հանդիպակաց բլոկում տեղաբաշխվել են այլ օժանդակ սենյակներ:

Վերակառուցման արդյունքում շենքին ավելացվեցվել են բոլոր հնարավոր հարմարությունները, ինտերիերները արդիականացվել են ժամանակակից բոլոր պահանջներով, նորացվել են կահույքն ու ինժեներական ցանցերը:

## Տպարանին մերձակա պատմական շենքի վերածումը այցելուների սեղանատան

Տպարանի հարավ-արևելյան կողմում գտնվող այս ընդարձակ շենքը եռանավ, 9մ բարձրությամբ բազիլիկ կառույց է, որ բոլոր ուղղություններով ծածկված է կամարակապ թաղերով: Կամարները գազաթում սրածայր են: Կողային լուսամուտները, պայմանավորված պատի հաստությամբ, բավականին խորն են: 15x36 մ չափերի հասնող այս շենքը խորհրդային տարիներին օգտագործվել է որպես հուշանվերների ու արտարժույթով վաճառվող ապրանքների խանութ: Հենց այդ նկատառումներով կառույցի արևմտյան կողմը հարմարեցված է ապրանքների ընդունման, բեռնաթափման ու պահեստավորման համար: Շենքի այս հատվածը վերածվել է սեղանատան խոհանոցի՝ իր լվացարանով ու սանհանգույցով: Ներսը արդիականացվել է ինժեներական բոլոր կոմունիկացիաների հետ: Սեղանատան արևելյան առաջնամասում սպեղծվել է հայկական ժողովրդական տան մոտիվներով մտահղացված փայտաշեն հովանի, որ գծային շարունակությունն է Երեմյան խցերի ու տպարանի առաջ գտնվող կանաչապատ տարածքների ցանկապատի:

## Վերանորոգություններ Ս. Գայանե վանքում և հարակից տարածքներում

Վերջին տարիներին իրականացված ընդարձակման արդյունքում Ս. Գայանե վանքը գրեթե ընդգրկվեց Մայր Աթոռի տարածքում: Այն միանգամայն ներգարավվեց ուսումնական գոտու հեռանկարում, և հետագա ծրագրերում երկու համալիրների զարգացումը կկապարվի միասնաբար:

Դեռևս Եզր Կաթողիկոսի գահակալության տարիներին՝ 630-641 թթ. կառուցված վանքը հիմնադրվել է Ս. Գայանեի նշխարների վրա: Վանքի շինարարության մասին վաղ և զարգացած միջնադարից մեզ հասած տեղեկությունները սուղ են: Հիմնական շինարարական տեղեկությունները ուշ միջնադարից են:





Ս.Գայանե եկեղեցու գավթի և կտուրի վերնորոգումները

Ըստ Առաքել Դավրիժեցու եւ եկեղեցու հարավ-արեւմտյան պատի վիմական արձանագրության՝ 1602 թ. Փիլիպպոս Կաթողիկոսը վերակառուցել է ավերված տաճարը[10], 1688 թ. Եղիազար Կաթողիկոսը եկեղեցուն ավելացրել է կամարակապ գավիթը, 1872 թ. Վահան վարդապետ Բաստամյանցի վանահայրության օրոք նորոգվել է վանքը, ամբողջապես բարեկարգվել է տարածքը, եւ կառուցվել է մոնումենտալ դարպասը: Վանքում մեծ աշխատանքներ են կատարվել Վազգեն Ա Կաթողիկոսի գահակալության տարիներին: 1958-1980 թթ. իրականացվել է տաճարի ու նրա կտուրի վերականգնումը, վանքի ցանկապատի կառուցումը (ճարտարապետ՝ Ա. Գալիկյան), ամբողջապես մաքրվել են եկեղեցու ներքին մակերեւույթն ու սալահատակը, կառուցվել են վանատան աղբյուրն ու մատաղատունը (ճարտ.՝ Ռ. Իսրայելյան), երիցատունը եւ այլ շենքեր[11]:

Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալության տարիներին Ս. Գայանե վանքի տարածքում նույնպես ձեռնակվեցին ընդարձակ շինարարական աշխատանքներ: Ս. Գայանե վանքը բաղկացած է ցանկապատված տարածքի կենտրոնում տեղադրված նարթեքս-եկեղեցի համակառույցից, նրանցից հարավ-արեւմուտք տեղադրված երիցատնից ու մատաղատնից, դեպի արեւմուտք՝ կենտրոնական քանդակազարդ կամարաձեւ շքամուտքից եւ նրա երկու կողմերում գտնվող միաբանական նոր շենքից, վանքի արեւելյան կողմի միաբանական մենախցերից ու հյուսիս-արեւելյան հատվածի նախկին վանատնից: Վերականգնվեցին

10 Տեսնել. **Վ. Յարութիւնեան**, Եկայք շինեսցուք, էջ 83:

11 Տեն անդ, էջ 84-88:

միաբանական շենքը, սեղանատունն ու մառանը, վերանորոգվեց եկեղեցու սալահատակը: Ավարտվել է երիցատան վերակառուցման նախագծային գործընթացը, կատարվում են վանքի բակի, այդ թվում եւ գերեզմանատան տարածքի բարեկարգման, ինչպես նաեւ՝ 1960 թ. կառուցված քարոզչական կենտրոնը մանկատան վերափոխելու աշխատանքները:

### ա. Գերեզմանատների բարեկարգումը

Ս. Գայանե վանքի տարածքն ընդգրկում էր 4 գերեզմանոցային անբարեկարգ հատվածներ, որոնց բարեկարգման աշխատանքները ձեռնարկվեցին 2006 թ.: 1-ին, 2-րդ եւ 3-րդ գերեզմանոցները գտնվում են վանքի արեւմտյան հատվածում: Ընդ որում, 1-ին եւ 2-րդ գերեզմանոցները նախկինում տրամադրվել են աշխարհիկ բնակչությանը, իսկ 3-րդ եւ եկեղեցու հյուսիսային կողմում գտնվող 4-րդ գերեզմանատները հիմնականում հոգեւորականների համար են: Նշված գերեզմանոցների տարածքները մաքրվեցին ավելորդ քարերից, խախտված տապանաքարերը ամրացվեցին, տարածքում անցկացվեցին ծառուղիներ, ինչպես նաեւ ոռոգման ջրի, կոյուղու եւ արտաքին լուսավորության համակարգեր եւ գազաֆիկացում: Վերանորոգվեցին միջվանքային տարածքի ճանապարհների բետոնե սալերը եւ 1979 թ. կառուցված հասարակական սանհանգույցը:

### բ. Ս. Գայանե եկեղեցու եւ հարակից շենքերի վրա կատարված աշխատանքները

Գարեգին Բ Կաթողիկոսը ձեռնարկեց եկեղեցու, գավթի, միաբանության շենքի եւ օժանդակ կառույցների վերանորոգումը, որը կատարվեց շենքերի տեխնիկական գնման եւ չափագրական աշխատանքներից հետո: Նոր վանատունը կամ միաբանության շենքը տուֆակերտ միահարկ նկուղային հարկաբաժնով կառույց է: 1979 թ. նորոգման ընթացքում նրա միջհարկային փայտե ծածկը փոխարինվել էր բետոնով, իսկ հողակերտ տանիքը՝ ծպեղնահարկով: Տասնամյակների ընթացքում շենքի հարդարանքը եւ դռների ու լուսամուտների փեղկերը խունացել էին, պատերի ստորին հատվածները խոնավությունից քայքայվել ու հատակները տեղ-տեղ մաշվել էին: Մանավանդ անօգտագործելի էին դարձել խոհանոցն ու սանհանգույցը: Այս բոլորը վերահատակագծվեցին եւ բնակության համար ստեղծվեցին հարմարավետ պայմաններ: Հարավային մասնաշենքը հատկացվեց գրասենյակային նպատակների՝ համապատասխան ընդունարանով ու աշխատանքային սենյակով, ննջարանով, իսկ նկուղային հարկում տեղադրվեցին խոհանոցն ու սեղանատունը: Հյուսիսային մասնաշենքում տեղաբաշխվեցին վանականների ընդհանուր սենյակը, 4 ննջարանները, իսկ նկուղային հարկում տեղադրվեցին ցնցուղները, լվացքատունն ու պահեստային սենյակները: Կառույցի երկու մասնաշենքերը համալրվեցին ջեռուցման համակարգով, փոխվեց հատակը, ջրամեկուսացվեցին հիմքերը: Նկուղի օդափոխությունն ապահովելու նպատակով, առաջին հարկի լուսամուտների առանցքներով բացվեցին 60x60 սմ չափերի նոր լուսամուտներ:

1979 թ. վերանորոգումից հետո Ս. Գայանե եկեղեցու հյուսիսային կողմի ծածկասալերը թուլացել էին, որի հետեւանքով թրջվում էր ծածկի թաղերի մակերեւույթը: Պատերի շաղախը տարիների ընթացքում դատարկվել էր՝ առաջացնելով որմնացքեր: Ձեռնարկված վերականգնման աշխատանքներով վերացվեցին այդ թերությունները: Անհետաձգելի վերանորոգման կարիք ունեին նաեւ գավթի արեւելյան հատվածի աղյուսե գմբեթարդները: Քանի որ դրանք շարված էին գաջե լիցքով, խոնավանում եւ հետզհետե քանդվում էին, որի հետեւանքով քայքայվում էին նաեւ եկեղեցու ճակատի որմնանկարները: Այս թերությունները վերացվեցին ստեղծված պատային կարանների միջոցով: Վերացվեցին նաեւ 1979 թ. կառուցված եւ 2002 թ. բարենորոգության ենթարկված մատաղատան թերությունները: Այստեղ կառուցվեց նոր հարմարություններով խոհանոց, պատերի վրա կուտակված աղերից մաքրվեց ու արդիականացվեց ճաշասրահի ներսը, շենքն ապահովվեց մշտական խմելու ջրով: Նորոգվեց եկեղեցու հարավ-արեւմտյան կողմի ստորգետնյա մառանի տանիքն ու ջրամեկուսացվեցին խոնավացող պատերը: Արդիականացվեցին աշխատողների՝ արեւմտյան կողմում գտնվող հանգստի սենյակները, ճարտարապետական նոր հարմարեցման նախագծով կյանքի կոչվեց հին վանատունը եւ այլն:

### գ. Ս. Գայանե եկեղեցու երիցատան վերանորոգման նախագիծը

Ս. Գայանե եկեղեցու հյուսիս-արեւելյան կողմում գտնվող այս կառույցը, միաբանական մասնաշենքի կառուցումից հետո լքվել էր: Արտաքինից 19.5x12.8 մ չափերով ուղղանկյուն շենքը ընդլայնական՝ կրող երկու պատերի միջոցով բաժանվել է երեք ենթամասի, կենտրոնական մասի հետնապատին տեղադրվել է փայտաշեն աստիճանավանդակը: Շենքի տանիքը հարթ է: Լ. Թորգոմյանի 2005 թ. նախագծով շենքը վերածվել է երիցատան: Պահպանվել են շենքի հիմնական տարրերը: Կենտրոնական մասը վերածվել է նախասրահի, որի հետին պատի փայտաշեն աստիճանները նորացվել են: Սրահի երկու կողմերում երեք հյուրասենյակներ են, որոնք ունեն մեկսենյականոց բնակարանի հարմարություններ, ընդ որում, դրանց համար նախատեսված ընդհանուր խոհանոցը զետեղվել է հարավ-արեւելյան անկյունում: Երկրորդ հարկում նույն դասավորությամբ կա երեք բնակարան եւս, որոնցից երկուսը զգալիորեն մեծ են քան առաջին հարկում եղածները: Շենքի հարկերի բարձրությունը 3.6 մ է: Ճակատները զուսպ են եւ իրենց ընդհանուր հատկանիշներով նման են միաբանական շենքի կերպարին: Առանձնապես ուշագրավ է արեւմտյան ճակատի երկսլաք եւ կլոր կամարներով համադրված շքամուտքը, որի բացվածքային մասը մշակվել է ապակե գեղեցիկ վիտրաժով: Դռան սիմետրիայով տեղադրվել է մեկ զույգ լուսամուտ, չորսական լուսամուտ կա նաեւ ճակատի կողային մասերում: Այս նույն մոտեցումներով ու առանձնահատկություններով է կառուցված նաեւ արեւելյան ճակատը: Հյուսիսային ճակատի վրա՝ երկրորդ հարկում, տեղադրվել է հայկական ժողովրդական ճարտարապետության մոտիվներով փայտաշեն մի պատշգամբ: Շենքի ճարտարապետությունը դասականի եւ ժողովրդականի միահյուսմամբ ստեղծված էկլեկտիկա է:

### դ. Քարոզչական կենտրոնի վերածումը մանկապան

Ս. Գայանե վանքի տարածքում գտնվող քարոզչական կենտրոնը, Մայր Աթոռին ենթակա Շողակաթ հեռուստահաղորդման շենքի շահագործումից հետո, Գարեգին Բ Կաթողիկոսի նախաձեռնությամբ վերածվեց մանկապան: Երկհարկանի կառույցը տեղադրված է վանքի հյուսիս-արևմտյան կողմի այգեպատ տարածքում: Շենքը նախկինում վանական կառույց չլինելով՝ առանձնացված մուտք է ունեցել և հետագայում միացվել է Ս. Գայանե վանքին: Այն 22.5x14 մ չափերով երկհարկանի ուղղանկյուն քարակերտ շինություն է՝ ավանդական երկթեք տանիքով: Հարկերի հատակագծային լուծման համաձայն՝ սենյակները բաշխվել են արևելքից արևմուտք երկարող կենտրոնական միջանցքի շուրջ, ընդ որում, աստիճանավանդակը տեղադրված է հարավային կողմի կենտրոնական հատվածում: Արևելյան հատվածի վերջնամասը հատկացված է շենքի թաց տարածքներին: Առաջին հարկում կան ցուցադրանքներ, իսկ առընթեր՝ ընդհանուր սանհանգույցն է: Ցուցադրանքներից վերև՝ երկրորդ հարկում նույնպես սանհանգույցներ են: Ամեն մի հարկում կան ուսուցչի և հերթապահի սենյակներ: Ի տարբերություն երկրորդ հարկի, ուր հիմնականում մանուկների ննջասենյակներն են, առաջին հարկում մի քանի ննջարանների հետ կա նաև ընդարձակ խաղասենյակ, ինչպես նաև բժշկի, վարչական, պահեստի և այլ սենյակներ: Մինչ վերանորոգումը, շենքի շուրջ անցկացվել է օդափոխության ցանց և կատարվել է գոյություն ունեցող կրող պատերի ամրացում:

### ե. Էջմիածնի Հայորդյաց տունը

Խորհրդային տարիների պիոներական պալատը բովանդակությամբ նման է մերօրյա հայորդյաց տանը, որ նոր անվանումով տարածում ստացավ Գարեգին Բ Կաթողիկոսի նախաձեռնությամբ: Այս օգտակար միջոցառումը ոչ միայն ծառայում է պատանիների հայեցի ու քրիստոնեական դաստիարակությանը, այլ նաև խորհրդահայ հասարակարգին բնորոշ շենքի տեսակի պահպանման ու նորովի օգտագործման լավագույն օրինակ դարձավ: Էջմիածնի Հայորդյաց տունը գտնվում է Ս. Գայանե վանքի համալիրից ոչ հեռու, անմիջապես «Իսի-լե-Մուլինո» փողոցի վանքին առընթեր մասում:

Համակառույցը խորհրդահայ պիոներ պալատների հաջողված օրինակներից է, որ կառուցվել էր 1971-1979 թթ. (ճարտարապետ՝ Երվանդ Մելիքյան): 1991 թ. հետո, տնտեսական անբարենպաստ պայմանների պատճառով, շենքը չջեռուցվելու, մթնոլորտային տեղումները հարթ տանիքներից չհեռացնելու հետևանքով քայքայվել էր: Համալիրը կազմված է 5 մասնաշենքից և այլ օժանդակ կառույցներից: Այն բնութագրվում է բաց և կառուցապատված տարածությունների հետաքրքիր համադրությամբ: Այստեղ, հորինվածքի կենտրոնի դեր կատարող բաց աստիճանավանդակի շուրջ տեղադրված են աստղադիտարանը, բացօթյա դահլիճը, լսարանային եռահարկ մասնաշենքը և նրան հարակից մարզական ու հանդիսությունների դահլիճների մասնաշենքը՝ իր առանձնացված բացօթյա մարզադաշտով: Ըստ առաջադրանքի, պահպանելով բաղկացուցիչ շենքերի կոնստրուկտիվ համակարգը, նշված շենքերը վերահատակագծվել և նորովի վերակառուցվել են:

Լսարանային եռահարկ մասնաշենքի առաջին հարկի նախասրահը հարակից մի քանի սենյակներով վերածվել է 60-80 տեղանոց բարեգործական ճաշարանի՝ համապատասխան խոհանոցային եւ պահեստային մասերով: Նախկինում գոյություն ունեցող հանդերձարանը տրամադրվել է պահակային եւ սպասարկող անձնակազմին: Հայորդյաց տան ու ճաշարանային հատվածի վարչական սենյակները զբաղեցնում են ճաշարանի արեւելյան կողմը՝ նրանից անջատվելով հյուսիս-հարավ ձգվող երկար միջանցքով: Հայորդյաց տան մուտքը հարավային կողմից է: Մինչեւ նախամուտքը կանաչապատ տարածք է: Նախամուտքը ապակեպատ ընդարձակ տարածություն է, որտեղ տեղաբաշխվել են նաեւ ներքին աստիճանավանդակն ու սանհանգույցները: Նախասրահի հյուսիսային կողմից անցում է կատարվում նաեւ դեպի մարզական ու հանդիսությունների դահլիճները: Խմբակային դասասենյակները հիմնականում տեղաբաշխվել են երկրորդ եւ երրորդ հարկերի՝ հյուսիս-հարավ միջանցքի երկու կողմերում: Լսարանների առջեւ ընդարձակ պատշգամբն է, որ ծառայում է նաեւ համադպրոցական միջոցառումների եւ դասամիջոցների համար: Բոլոր լսարանները վերահատակագծվել եւ վերածվել են տարբեր պրոֆիլի խմբակային դասասենյակների: Այդ թվում՝ պարարվեստի, գորգագործության, ասեղնագործության, ձեռքի աշխատանքների, երաժշտության զանազան բնագավառների, փայտի գեղարվեստական մշակման, համակարգչային տեխնիկայի ուսուցման, քանդակագործության եւ կավագործության, գեղանկարչության եւ մանրանկարչության, օտար լեզվի, կրոնի դասավանդման եւ այլն: Շենքը օժտված է ժամանակակից ինժեներական բոլոր ծառայություններով: Ամեն մի դասարան, ըստ պրոֆիլի, ունի համապատասխան ինֆրաստրուկտուրա: Հաշվի առնելով, որ շենքերի հիմնական վնասվածության պատճառը տանիքի հարթ լուծումն է, այն վերակառուցման ընթացքում փոխվել է՝ դառնալով քառալանջ:



Էջմիածնի Հայորդյաց տունը

Ուսումնական կառույցի արեւմտյան կողմում գտնվող միահարկ շենքը վերածվել է ցուցասրահի: Այն կենտրոնական հատվածում ունի ջրավազան եւ ծաղկանոցներ: Ցուցասրահի հյուսիսային կողմում տնտեսական գծով փոխտնօրենի աշխատասենյակն է եւ համակառույցի հանդերձարանը: Մասնաշենքի տարածքը միջանցիկ է, որ տանում է դեպի դահլիճներ: Հանդիսությունների դահլիճի նստատեղերի քանակը շուրջ 50 տեղով ավելացնելու համար, մուտքային մասը եռանկյունաձեւ մակերեսից վերածվել է ուղղանկյունու, ինչպես նաեւ էվակուացիոն նպատակներով ավելացվել է դեպի բակ բացվող մուտքերի թիվը: Ամբողջապես վերանորոգվել է բեմական մասը ու լրացվել համապատասխան բեմական գրպաններով, վերափոխվել են հանդիսությունների դահլիճի հատակն ու կախովի առաստաղը: Նույն կարգի ուղղումներ կատարվել են նաեւ բասկետբոլի ու վոլեյբոլի, շեյփինգի ու ազգագրական համույթների դահլիճներում, նորոգվել են ծածկերն ու օդափոխության համակարգը: Դահլիճային մասը լրացնում է հարավային կողմում գտնվող 60 տեղանոց բացօթյա սրահը, որը կահավորվել է ամրացված նստատեղերով: Բնականաբար տվյալ համալիրի գեղարվեստականությունը լրացնում են թվարկված շենքերի միջեւ տարածվող կիսածածկ հարթակները՝ իրենց գազոններով եւ հայելային մակերեսներով: Վերակառուցման ընթացքում հանդիսությունների մասնաշենքի տանիքը ամբողջապես ջրամեկուսացվել է:

Հայորդյաց տան արդիականացումը կատարվել է ըստ անհրաժեշտության կառուցված նոր միջնորմներով, նորովի կառուցվել են տանիքները, դռներն ու պատուհանները: Ամբողջապես վերականգնվել են էլեկտրական սնուցման, օդափոխության, կոյուղու եւ ջրամատակարարման, ջեռուցման ցանցերը եւ այլն:

* * *

Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալության տարիները կարելի է բնութագրել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառուցապատման համակարգված զարգացմամբ: Վազգեն Ա Կաթողիկոսի ժամանակ օպտիմալ կառուցապատմամբ ամրագրված Մայր Աթոռի տարածքը Գարեգին Բ Հայրապետի ջանքերով աննախադեպ ընդարձակվեց՝ ի հաշիվ խորհրդային տարիներին օտարված տարածքների վերադարձման: Վազգենյան շրջանի ցանկապատը իրացվեց, եւ անցկացվող նոր ցանկապատի համար այդ տարածքը հորինվածքային կորիզ դարձավ: Մայր Աթոռը ընդարձակվեց այնքան, որ այն հարակից դարձավ մի կողմից Վաղարշապատ քաղաքի Կոմիտասի անվան հրապարակին, իսկ մյուս կողմով ընդհուպ մոտեցավ Ս. Գայանե վանքի տարածքին:

Գարեգին Բ Հայրապետի բանիմացությամբ Մայր Աթոռի տարածքի ընդարձակումը կատարվում է օգտապաշտորեն եւ ստեղծագործաբար՝ դրանով իսկ ամրագրելով դեռեւս ընթացող կառուցապատման օրինաչափությունը: Ըստ անհրաժեշտության հստակորեն շեշտվեցին Մայր Աթոռի առանցքային ուղղությունները՝ Ս. Գրիգոր Լուսավորչի դարպասից դեպի Մայր Տաճար ու Նոր Վեհարան, ինչպես նաեւ Վազգենյան դարպասից դեպի Ս. Գայանե վանք: Սահմանելով դարպասների տեղերը, Մայր

Աթոռի տարածքը հստակորեն բաժանվեց 5՝ Մայր Տաճարի բակի, վեհարանային, կրթամշակութային, միաբանական և տնտեսական գոտիների: Կառուցապատման մեջ հստակեցվեցին հետիոտնի և մեքենաների շարժման ուղղությունները, Ս. Գրիգոր Լուսավորչի դարպասից դեպի Մայր Տաճար ձևավորվեց ուսումնամշակութային բովանդակությամբ հետիոտն անցուղարձի հրապարակ, իսկ արտադրական համակառույցի ուղղությամբ՝ մեքենաների շարժման գոտին և հրապարակը: Մայրավանքի ընդհանուր տարածքը մտահղացվել է որպես բացօթյա թանգարան: Ընդ որում, կառուցապատման զարգացումը կատարվում է համալիր եղանակով, ժառանգված բոլոր շենքերը (Մայր Տաճարը, Հին և Նոր Վեհարանները, Խրիմյան թանգարանը, վարչական շենքը, Ղազարապատը և հարակից շենքերը, վանատունը, տպարանը, Երեմյան խցերը, հին մատենադարանը) առանց բացառության, նորոգվելով արդիականացվեցին: Կառուցապատումը օրինաչափորեն խտացվեց ստորև ուսումնասիրվող նորակառույց բազմաթիվ շենքերով, որոնք այսօր նոր երանգ և շունչ են հաղորդում Մայր Աթոռի համալիրին: